

Տ. ԱՐՇԱԿ ՎԱՐԴԱՊԵՏ ԽԱՉԱՏՐՅԱՆ
(ավազանի անունը՝ Սամվել)

Ծնվել է 1973 թ. օգոստոսի 5-ին Արմավիրի մարզի Ոսկեհատ գյուղում:

1979-1990 թթ. ընդունվել և ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը:

1990-1996 թթ. ընդունվել և ավարտել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանը:

1996 թ. մայիսի 19-ին Մայր Տաճարում ձեռնադրվել է սարկավագ՝ ձեռամբ Տ. Անանիա եպս. Արաբաջյանի:

1996-1997 թթ. աշխատել է Վեհարանում որպես քարտուղար:

1997 թ. հոկտեմբերի 30-ին Գևորգյան Հոգևոր Ճեմարանում պաշտպանել է ավարտաճառ՝ «Հնդկահայ գաղութը և Մայր Աթոռի նվիրակությունը Հնդկաստանում» վերտառությամբ՝ արժանանալով «գերազանց» գնահատականի:

1997 թ. դեկտեմբերի 14-ին, ձեռամբ Եգիպտոսի հայոց թեմի առաջնորդ Տ. Ջավեն արքեպս. Չինչինյանի, Մայր Տաճարում ձեռնադրվել է կուսակրոն քահանա՝ նշանակվելով Մայր Աթոռի պարեպ:

1999 թ. մարտի 1-ին Կաթողիկոսական ընդհանուր փոխանորդ Տ. Գարեգին արք-եպս. Ներսիսյանի կողմից ծառայության է կոչվել «Էջմիածին» ամսագրի խմբագրությունում՝ որպես գլխավոր խմբագրի պաշտոնակատար:

2000 թ. հունվար 1-ին նորընտրյալ Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հրամանով նշանակվել է նորաստեղծ «Մայր Աթոռ - Թեմեր» գրասենյակի վարիչ-տնօրեն, 2001 թ. փետրվար 12-ի Հայրապետական տնօրինությամբ ստանձնել է Մայր Աթոռի դիվանապետի պարտականությունները:

2001 թ. փետրվարի 21-ին պաշտպանել է վարդապետական թեզ՝ «Հայ Եկեղեցու նվիրակությունը» թեմայով: Նույն թվականի փետրվարի 22-ին, ձեռամբ Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Գերաշնորհ Տ. Նավասարդ եպս. Կճոյանի, ստացել է Մասնավոր վարդապետական ջրոս աստիճան: